ամբողջական կեանք: Տխուր, տրտում, միակերպ եւ սակայն, եթէ մտածենք, ի՞նչքան բովանդակալից: Գիշերը ժողովւում են մէկի կամ միւսի տունը, քրսինի շուրջը, չիր ու չամիչ են ուտում, օղի խմում, երկար պատմութիւններ պատմում: Գիւղի պատմութիւնները՝ երկարօրէն ծամուած, որոշակի գծերով նկարուած, ոսկեխառն գոյներով, պարզ, խորամանկ եւ փիլիսոփայական: Դեւն եւ դիւցազունը, կաքաւը, աղուէսը, սատանան եւ Ս. Կարապետը եւ թագաւորների հոյակապ պատմուճանները ու կարիճների խրնխնջող ճերմակ ձիերը...

— Ես պատկերացնում էի մեր կեանքը ինչպէս մի Վայմար, մի Վայմար, ուր մեծ Դուքսը, թո՛ղ լինի պրոլետարիատի Դուքսը, հայ իրականութեան փոշիացած տափաստանի վրայ պիտի ուզէ վերականգնել, աւելի շուտ ստեղծել, մշակոյթային այն կեանքը, տեւական մտային արժէքների այն փայլը, որոնք կոչուած են մնալու ըէժիմների եւ պետութիւնների անհետացումից յետոյ: Գիտէի մեր նիւթական թշուառութիւնը եւ չէի վախենում, կուահում էի բղում այն արգելքները, որոնց պիտի բախենք եւ չէի վհատում:— Մի Վայմար...

— Փոքրիկ թատրոնը, բարձր ծառերի շուրջի տակ պառկած պողոտան, պարտէզի անկիւնում մինակեաց նստած փիլիսոփան, բանաստեղծը, Համալսարանը:

— Այո, այդ ամէնը ներքնապէս: Բարոյական եւ մտաւոր այն մթնոլորտը, ուր ծընւում են նուրբ եւ կատարեալ մշակոյթային արժէքները, ուր ծաղկում է հոգեկան մրգաստանը, ուր երկրորդական թուացող երեւոյթները խորացումի եւ արուեստի մեծ պատճառներ են դառնում, ուր, վերջապէս՝ եւ այդ ամենակարեւորն է՝ ստեղծւում է լեզուն եւ դաղրում են գոյութիւն ունենալ բարբառները:

— Մոռանում էի դիկտատուրան...

— Ես ոչինչ չեմ մոռանում: Թրքաց արշաւանքների ամենադաժան տարիներին իսկ հայ ոգին կարողանում էր պահել իր դիմագիծը: Մենք ունենք մեր կուատրօչենտոն եւ չինկենչենտոն՝ ի՞նչքան քիչ ուսումնասիրուած: Փոքրիկ մեր միապետները, մինչեւ իսկ հայութիւն ընդունած մոնղոլ իշխանները՝ աղաները, մելիքները, նրանք որ իրենց կոչում էին «չահնչահ», «ամիր սպասալար», «աթապակ», «մեծափառ տեարք», «քաջ զօրավար ընդդէմ թշնամեաց խաչին Քրիստոսի» եւ տիրում էին Սիւնեաց երկրի վրայ, Արարատեան դաշտի, Արագածի լանջերի վրայ, նրանք, որ գեղեցիկ եւ հնչուն, Տաստոյի եւ Արիստոյի դիւցազներգութիւնները յիշեցնող անուններ էին կրում՝ Ալադան, Սատրիկ, Բահադին՝ նրանք իսկ յայտնաբերում էին մեծ չինարար ոգի ու սէր դէպի արուեստը եւ գրականութիւնը: Քանի՞ քանի՞ հրաշակերտ եկեղեցիներ թողած են նրանք, ինչպիսի՞ հսկայական ջրանցքներ եւ շինութիւններ, ի՞նչ գեղեցիկ ձեռագիրներ, տարիների ընթացքին զարդարուած ոսկեզօծ մանրանկարներով ու ծածկուած թանկարժէք կազմերով... Նրանք չինած են վանքեր, ուր հայ միտքը կարող էր պատսպարուել, նրանք պաշտպանած ու քաջալերած են հայ երգը, լեզուն, գրականութիւնը եւ այդ, ինչպէս գրում էին, «վասն հոգւոյ» իրենց եւ արեւշատութիւն որդոց: Արեւշատութի՛ւն: Մեծ եւ գեղեցիկ բառ, լայնաթեւ, խորհրդաւոր, ու այդ բառերի տակ՝ խոր, մեծդի զգացումների ինչպիսի՞ ալեկոծումներ: Վիթխարի մարդիկ էին. քաջ կռուողներ, շինարարներ եւ նաեւ հրմուտ կղերականներ: Ցիշո՞ւմ էք. «Մանուէլ եպիսկոպոս Բղնոյ եւ Արարատեան...սրբազան վեհ...երջանիկ եւ առաքելաշնորհ արհիական գլուխ, մեծ մետրապօլիտ եւ վերապիտող երկնաքանդակ Տանն Արարատեան...իշխան եւ իշխեցնող երկոտասան վիճակաց» կամ այլ ինչը՝ «շնորհազարդեալ փիլիսոփայական հմտութեամբ, աստուածաշունչ մատենից եւ երաժշտական եղանակաց»...

— Եւ երաժշտական եղանակաց:

— Այդպիսի լեզուով կարող է խօսել մի Լօրենցօ դի Մեդիչի, Միլանի կամ Ֆեռարայի մի իշխան, մի Վազարի, մի Մաքեավիլլի... Ես նրանց երեւակայում եմ...

— Ով որ Նորքի ստորոտին ծաղկած նշենիները չի տեսել՝ ոչինչ չի տեսել:

— Գարնան ձիւնը դառնում է հեղեղ եւ գիւղը բիւրեղեայ երգ է երգում: Ամէն ինչ միանդամայն է արթնանում, մէկ օրից միւսը, անսպասելի կերպով: Լեռը եւ արեւը յորդում են դէպի դաշտ, հողերի մէջ հիւթերը թաւալ են գալիս, եռում ու զեռում են, ծաղկում,

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան